ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԳԱՐՆԱՆԸ

Ա. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

1920 թ. գարունը հայոց բազմաչարչար երկիրը դիմավորեց համեմատաբար խաղաղ պայմաններում։ Հանրապետության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում առկա էին նկատելի տեղաշարժեր։ Միաժամանակ չափազանց բարդ էր մնում երկրի ներքին և արտաքին քաղաքական դրությունը։

Ներքին քաղաքական իրավիճակը ապակայունացնող կարևորագույն գործոններից մեկը նրա տարածքում ավելի քան կես միլիոն մահմեդական տարրերի (գերազանցապես ազերիների) առկայությունն էր։ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հրահրվող և ուղղություն տրվող թուրք-թաթարական պարբերական խռովություններն ու զինված ելույթները հիմնականում նպատակ էին հետապնդում սասանել Հայաստանի անկախությունը և դրա խորտակման միջոցով իրականություն դարձնել համաթուրքական կարգախոսները։ Նման կարգի հակապետական և հակահայկական շարժման կենտրոններ էին դարձել Զանգիբասարը, Շարուր-Նախիջևանը, Կարսը, Զանգեզուրը, Սուրմալուն, Բոյուք-Վեդին և այլն։

Անհրաժեշտ է նշել, որ նման խռովությունները տեղ էին գտել նույնիսկ հանրապետության այն տարածաշրջաններում, որտեղ հայ տարրը նկատելի մեծամասնություն էր կազմում։ Այսպես, Արաքսի հովտում 1920 թ. 405 հազ. հայ ազգաբնակչության կողքին ապրում էին 316 հազ. մահմեդականներ, 20 հազ. քրդեր և 10 հազ. զանազան ազգության քրիստոնյաներ[1]։ Սակայն դա չէր խանգարում, որ թուրք-թաթարական տարրերը Հայաստանի կառավարությանը և բնակչությանը մշտապես պահեին լարվածության մեջ։ Այսպես, 1920 թ. Զանգիբասարի ռազմական իրադրությանը վերաբերող կառավարական հաղորդագրություններից մեկում նշվում է. «Թուրք-ադրբեջանական գործակալներն ու զինվորական ուժերն իրենց գործողության վայր են ընտրել Զանգիբասարը և համառորեն խանգարում էին Հայաստանի կառավարությանը՝ կազմակերպելու տեղական իշխանություն, հարձակումներ էին գործում կառավարական զորամասերի և դաշտերում աշխատող մոտակա հայ գյուղացիների վրա, մինչև անգամ վերջնագրեր էին ներկայացնում հայ գյուղերին՝ թելադրելով որոշ պայմաններ... կառավարությունը ստիպված եղավ դիմել ուժի, կառավարական զորքերին հաջողվեց կռվով տիրել հետևյալ ապստամբ թուրք գյուղերին. Հաջի Ղշլաղ, Գեոյգմբեթ, Արբաթ, Ղուլալի, Խաչիարուխ, Շարլուդամրչի, Հաջիյելազ, Ենգիջա, Վերին և Ներքին Նեջուլներ, Սաբվանլար, Ուլիան, Թազա Կարիուն»[2]։

Որքան էլ դա հանրապետության ազգային պետական շահերի տեսանկյունից անցանկալի լիներ, մահմեդականների զինված ելույթները տեղ էին գտել հենց Արարատյան դաշտավայրում։

Խռովարարների հետ խաղաղ ճանապարհով հարաբերությունները կարգավորելու կառավարության փորձերը ավարտվել են անհաջողությամբ։ Նման պայմաններում իշխանություններին ոչինչ չէր մնում, եթե ոչ խռովության օ-

---

1 Նախիջևան—Շարուրը 1918—1921 թթ., փաստաթղթեր և նյութեր (Բանբեր Հայաստանի արխիվների, 1993, № 1—2, էջ 238)։

2 ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 290, ց. 1, գ. 32, թ. 1։

ջախները վերացնել ուժի միջոցով։ Ինչպես նշվում է Մոսկվայում գտնվող ՀՀ պատվիրակության ղեկավար Լ. Շանթին հասցեագրված՝ Տ. Բեկզադյանի հեռագրում, «Զանգեզուրում թաթարների կրկնակի ելույթներից, 10 զինվորների սպանությունից և 20-ի վիրավորվելուց հետո կառավարությունը վերջնագիր ներկայացրեց Հայաստանի իշխանություններին ենթարկվելու մասին»[3]։ Իշխանությունները դիմեցին վճռական գործողությունների, և հունիսի 20-ին հայկական զորքերը գրավեցին ամբողջ Զանգեզուրը՝ որպես ռազմավար վերցնելով 2 թնդանոթ, 4 գնդացիր, 40 հազ. փամփուշտ և բազմաթիվ հրացաններ[4]։

Քեմալական Թուրքիայի և մուսավաթական Ադրբեջանի հետ խռովարարների կապերն ակնհայտ էին, և կասկած լինել չէր կարող, որ ոչ միայն համապատասխան հրահանգները, այլև անհրաժեշտ զենքն ու զինամթերքը ստացվում էին դրանցից։ Այդ է վկայում Մոսկվա ուղարկված ներքոհիշյալ հեռագիրը, որում նշվում է, որ խռովարարները «թուրքական ասկյարների հետ միասին անցան Արաքսի ուղղությամբ, թողնելով երկու հրանոթ, երեք գնդացիր և շատ ռազմական հանդերձանք»[5]։ Արխիվային վավերագրերը ցույց են տալիս, որ դեռ 1919 թ., մի կողմից, Թուրքիայի ու Ադրբեջանի, իսկ մյուս կողմից, Հայաստանի մահմեդական ապստամբական շրջանների միջև եղել է համաձայնեցված նախապատրաստություն՝ ՀՀ դեմ լայնամասշտաբ գործողություններ ծավալելու և անկախ հանրապետությունը խորտակելու նպատակով[6]։

Անհրաժեշտ է նշել, որ 1920 թ. մայիսյան հայտնի իրադարձությունները և դրանց հետևանքով հանրապետության ներքին իրավիճակի որոշակի ապակայունացումը, ինչպես նաև հանրապետության ղեկավարության ներսում տեղ գտած ճգնաժամային երևույթները օբյեկտիվորեն ավելի ոգևորեցին թուրք-թաթարական խռովարարներին։ Թուրք-թաթարական հակապետական ելույթներից առավել համառ բնույթ կրեցին մարտերը՝ Բոյուք-Վեդիի շրջանում։ Ինչպես հայտնի է, այստեղ կատաղի կռիվներ էին ընթացել դեռ 1919 թ. հուլիսին, որի ժամանակ հայկական բանակը տվել էր մոտ 200 զինվորի կորուստ[7]։ Բոյուք-Վեդիում սկսված հակահայկական գործողությունները տևեցին ավելի քան մեկ տարի։ Այդ ժամանակաշրջանի մամուլի տեղեկություններով, շրջանում կենտրոնացված թուրք-թաթարական ուժերը հասել էին այնպիսի հանդգնության, որ անգամ ծրագրել էին Երևանի գրավումը։ Խռովարարները մշտական երկյուղ էին տարածում Գյառնի-Բասարի, Ղամարլուի, Նոր-Բայազետի, Դաբալագյաղի և այլ բնակավայրերի հայ աշխատավորության շրջանում, հարձակումներ էին գործում գյուղերի վրա, տագնապի մեջ էին պահում կառավարական զորքերին։

1920 թ. փետրվար-մարտ ամիսներին Բոյուք-Վեդիի խռովարարները անգամ փորձեցին միանալու Զանգեզուրին, որի համար Բոզ-Բուրունիի և Աղդամլարի շրջանում մի քանի օր շարունակ տեղի ունեցան համառ մարտեր։ Շատ հավանական է, որ թուրք-թաթարական միացյալ ուժերի ստեղծման դեպքում հանդուգն փորձ կձեռնարկվեր գրավելու Երևանը։ Նման հեռանկարը խափանելու նպատակով հուլիսի 10-ի երեկոյան հայկական զորքերը սկսում են առաջխաղացումը դեպի Բոյուք-Վեդի։ Մեկ օր անց, համառ կռիվներից հետո հայերին հաջողվում է գրավել Ղարայալ, Ճաթղրան, Ալի-Մահմեդ, Ենդիջա, Կոտուխ, Աղասի-Բեգլու և Ներքին Կարաբեքլար գյուղերը։ Թուրքերը առանձնակի դիմադրություն էին ցույց տալիս Գյառուր ղալասի սարի մոտ։ Հայկական զորքերը, գնդապետ Հասան-Փաշայանի հրամանատարությամբ, երեք անգամ

---

3 Նույն տեղում, թ. 3։

4 Նույն տեղում, գ. 32, թ. 5։

5 Նույն տեղում, թ. 3։

6 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 85—86, գ. 427, մաս 2, թ. 234, 238, 249—250, գ. 496, թ. 18։

7 Նոր աշխատավոր, Թիֆլիս, 22.VII. 1919։

գրոհում են սարի վրա։ Ի վերջո, երեկոյան ժամը 6-ին, սվինային արյունալի մարտից հետո բանակային ուժերը նահանջի են մատնում թուրքերին և գրավում Գյաուր ղալասին։ Թշնամին այստեղ թողնում է բազմաթիվ դիակներ և մեկ գնդացիր։ Հուլիսի 12-ին հայկական զորքերին հաջողվում է գրավել Բոյուք-Վեդին, իսկ այնուհետև՝ Դավալուն և Արարատ կայարանը։ Այս հաղթարշավն ավարտվում է հուլիսի 14-ին՝ Շարուրի ազատագրումով։

Հայկական զորքերը, գրավելով Գայլի Դրունքը, փախուստի էին մատնել թուրք-թաթարական խռովարարներին և Շարուրի գավառի 10 գյուղերի բնակչությանը։ Նույն օրը Դարալագյազի ուղղությամբ հայերը գրավել են Արմիկ և Արխիս գյուղերը[8]։ Պատմությանը հայտնի բոլոր պատերազմներում հաղթող բանակները, որպես կանոն, զբաղվել են ավար ձեռք բերելով։ Նշված ժամանակաշրջանում հայկական բանակը ևս բացառություն չկազմեց։ Այս հանգամանքը, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է էդ. Զոհրաբյանը, բացասաբար անդրադարձավ հայոց զորքի ընդհանուր բարոյական վիճակի վրա, ինչը ցավալիորեն զգացնել տվեց նույն թվականի աշնանը սկսված թուրք-հայկական պատերազմում[9]։

Այսպիսով, հայկական զորքերի վճռական գործողությունների հետևանքով, 1920 թ. ամռանը հանրապետության տարածքում հիմնականում վերացվեցին թուրք-թաթարական խռովության օջախները։ Կասկած լինել չի կարող, որ դրանք անմիջականորեն կազմակերպվել և ֆինանսավորվել էին Անկարայից ու Բաքվից։ Ինչպես իրավացիորեն նշում էր «Ռազմիկ» թերթը, «ամբողջ մի տարի եղավ, ինչ Շարուր-Նախիջևանը կերակրվեց Ադրբեջանի ուղարկած փողերով։ Ամբողջ մի տարի եղավ, ինչ այդ շրջանների գյուղացիությունը տառապեց տաճկական և ադրբեջանական էմիսարների լծի տակ»[10]։ Այդ է վկայում նաև հանրապետության արտաքին գործոց նախարար Ալ. Խատիսյանի բերած փաստն այն մասին, որ Ադրբեջանի ներկայացուցիչ Խան-Թեքինսկին իր մարդկանց միջոցով խռովարարներին ուղարկել է 200000 ռուբլի, որը, սակայն, հասցեատիրոջը չհասավ սուրհանդակների ձերբակալության պատճառով։ Խատիսյանի տվյալներով, Ադրբեջանի կառավարության հատուկ սուրհանդակը իր հետ բերել էր նաև 5 միլիոն ռուբլի՝ Շարուրի շրջանի խռովարար գյուղացիներին բաժանելու համար[11]։

Ժամանակի հայ մամուլը տպագրել է նաև հավաստի տեղեկություններ՝ Հայաստանի տարածքում տեղ գտած խռովություններին թուրք բարձրաստիճան զինվորականների մասնակցության վերաբերյալ։ Այսպես, «Յառաջը», հենվելով արժանահավատ աղբյուրի վրա, տեղեկացնում է, որ Նուրի փաշան, ժամանակավորապես դադարեցնելով իր գործունեությունը Ղարաբաղում, անցել է Շարուր, տեղական թուրքերի հարձակումները Հայաստանի դեմ անմիջականորեն ղեկավարելու համար[12]։ Նույն օրերին, «Ռազմիկը» նշում է, որ թուրք- թաթարական գործակալները, Խալիլ բեյի գլխավորությամբ սկսելով Բոյուք-Վեդիի հակահայկական գործողությունները, համառ դիմադրություն են ցույց տալիս կառավարական զորքերին և վերջիններիս պատճառում մեծ կորուստներ[13]։

Ռազմական գործողությունների ավարտից հետո «Կառավարության հերթական խնդիրները» վերտառությամբ հաղորդագրության մեջ նշվում էր. «Հայ ժողովրդի միահամուռ կամքի համաձայն կառավարությունը վերահաստատում

---

8 Յառաջ, 16.VII 1920։

9 էդ. Ա. Զոհրաբյան, 1920 թ., թուրք-հայկական պատերազմը և պետությունները, Ե., 1997, էջ 355։

10 Ռազմիկ, 1920, № 10։

11 Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 205։

12 Յառաջ, 10.VII. 1920։

13 Նախիջևան—Շարուրը 1918—1921 թթ. ..., էջ 246։

է օրինական իշխանությունը ապստամբ գավառներում։ Եվ շուտով Հայաստանը հնարավորություն կստանա անմիջական հարաբերությունների մեջ մտնելու բարեկամ Պարսկաստանի հետ։ Բայց բավական չէ գրավել ամենայն իրավամբ Հայաստանին պատկանող գավառները, մենք գիտենք անցյալի գառն փորձից, որ հեշտ է նաև նրանց կորցնելը»[14]։ Միաժամանակ հաղորդագրության մեջ մտահոգություն է հայտնվում այն կապակցությամբ, որ Ատրպատականում և Մակուի խանության մեջ ապաստանած Շարուր-Նախիջևանի Թրքության բարձր խավերը պիտի ամենաեռանդուն քարոզչություն սկսեն Հայաստանի և հայ ժողովրդի դեմ, ինչը կարող է սառնություն ստեղծել մեր և պարսիկ ժողովրդի միջև։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր համարվում Երևան։—Ջուլֆա ճանապարհի բացումից անմիջապես հետո լիազոր ներկայացուցիչներ ուղարկել հարևան պետություն՝ պարսկական ղեկավար շրջաններին իրերի իսկական դրությունը ներկայացնելու և Թուրքական քարոզչության բացասական հետևանքները չեզոքացնելու համար։ Որպես կարևորագույն խնդիր, առաջ էր քաշվում նաև ազատագրված վայրերը հայերով բնակեցնելը։

Հայաստանի և Անդրկովկասի քաղաքական իրադրության վրա ազդող թերևս ամենաուժեղ գործոնը եղավ խորհրդա-Թուրքական մերձեցումը և համագործակցությունը։ 1920 թ. գարնանը արդեն ձևավորված քեմալա-բոլշևիկյան դաշինքի անմիջական ազդեցության հետևանքով կարևորագույն իրադարձություններ տեղի ունեցան Անդրկովկասում։ Ադրբեջանում իշխանության գլուխ կանգնած մուսավաթականները, հետևելով իրենց ավագ եղբայրների՝ քեմալականների գործելակերպին, ճիշտ գնահատելով ուժերի հարաբերությունը նոր քաղաքական իրադրության պայմաններում, որոշեցին խաղաղ կերպով խորհրդայնացնել իրենց հանրապետությունը։ Նման մոտեցումը միանգամայն իրատեսական էր, քանզի գեներալ Դենիկինի կամավորական բանակի պարտության հետևանքով 1920 թ. գարնանը Հյուսիսային Կովկասում փաստացի ուժը բոլշևիկյան 11-րդ կարմիր բանակն էր։ Մյուս կողմից, Մուստաֆա Քեմալի բազմաթիվ խոստումներին հավատացած՝ Խորհրդային Ռուսաստանի ղեկավարները, Հունգարիայում և Գերմանիայում սոցիալիստական հեղափոխություններ իրականացնելու անհաջող փորձերից հետո, համաշխարհային պրոլետարական հեղափոխության արտահանման գլխավոր փորձադաշտ դարձրին մուսուլմանական Արևելքը, որում հիմնական դերը հատկացվեց Թուրքիային։ Այդ է վկայում ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի 1919—1920 թթ. տարեկան հաշվետվության մեջ տեղ գտած հետևյալ միտքը. «Այս տարվա ամռանը մեր արևելյան քաղաքականության առաջին պլանում կանգնեցին մեր հարաբերությունները մուսուլմանական աշխարհի, այսպես կոչված, ավագ քրոջ՝ Թուրքիայի հետ»[15]։

Նման պայմաններում Ադրբեջանի անարյուն խորհրդայնացումը դարձավ օրակարգի հարց։ Ուստի, միանգամայն օրինաչափ էր, որ ապրիլի 28-ին սառնց որևէ կրակոցի Բաքվում հայտնված բոլշևիկյան զորամասերը, մի գիշերվա մեջ կարակուլե փափախները հնգաթև կարմիր աստղակիր կոմունարկաներով փոխարինած մուսավաթականների բարեհաճությամբ, Ադրբեջանը հռչակեցին խորհրդային հանրապետություն։

Իրադարձությունների նման ընթացքը չէր կարող չանդրադառնալ Հայաստանի Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականության վրա։ Խոսքը վերաբերում է գլխավորապես հայ բոլշևիկներին, որոնց համար խիստ ոգեվորիչ հանգամանք էր Հայաստանի սահմանների մոտ Կարմիր բանակի զորամասերի հայտնվելը։ Հակակառավարական բովանդակությամբ քաղաքա-

---

14 Ժողովուրդ, 10.VII. 1920։

15 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), (պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, էջ 473)։

կան կարգախոսները, որ բոլշևիկները ձևակերպել էին մայիսմեկյան ցույցերին, դարձան առկա իշխանությունները տապալելուն և երկիրը խորհրդայնացնելուն նպատակաուղղված շարժման նախերգանքը։ Մայիսմեկյան ցույցերին ու միտինգներին, որոնք ընթացան Երևանում և հանրապետության մյուս քաղաքներում, մեծ չափով տոն տվեցին Երևանի արհեստակցական միությունների միության կենտրոնական խորհուրդը և մասնավորապես նրա նախագահ, «ձախ» դաշնակցական Հայկ Ավալյանը։ Խորհրդարանի շենքի առջև կայացած միտինգում բոլշևիկ բանախոսներից ճառ արտասանեց Ստ. Ալավերդյանը[16]։ Նա կոչ արեց տապալել դաշնակցականների տիրապետությունը։

Հանրապետության քաղաքներից ու բնակավայրերից անհամեմատ հեղափոխականացած էր Ալեքսանդրապոլը, որն էլ դարձավ ապստամբության կենտրոն։ Ապստամբների կողմն անցավ կապիտան Սարգիս Մուսայելյանի գլխավորած «Վարդան զորավար» զրահագնացքն իր անձնակազմով։ Հարկ է ընդգծել, որ ապստամբության նախապատրաստման հարցում չկար միասնական տեսակետ բոլշևիկների Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) և Ալեքսանդրապոլի կոմիտեի միջև։ Արմենկոմը, ըստ ամենայնի հաշվի առնելով տեղում ապստամբության կողմնակիցների սակավաթիվ լինելու հանգամանքը, հույսեր էր կապում դրսից սպասվող ռազմական օգնության հետ, որը կարող էր Հայաստան հասնել ի դեմս 11-րդ կարմիր բանակի։ Այդ իսկ պատճառով կենտրոնը նպատակահարմար էր գտնում Խորհրդային Ադրբեջանին անմիջականորեն սահմանակից Ղազախի շրջանում ապստամբություն սկսելը՝ ակնկալելով վերը նշված օգնությունը։ Այստեղ, սակայն, տեսադաշտից դուրս էր մնացել մի կարևոր հանգամանք. Խորհրդային Ռուսաստանի զորքերը տվյալ պահին զբաղված էին պանական Լեհաստանի և բարոն Վրանգելի զորքերի հարձակումները հետ մղելով ու այդ իսկ պատճառով իրական հնարավորություն չունեին՝ հայ բոլշևիկներին շոշափելի աջակցություն ցույց տալու։ Այդ օրերին ապստամբած ուժերի միացյալ հրամանատար կապիտան Ս. Մուսայելյանի հետ ուղիղ կապի մեջ մտած գեներալ Գամազովը ընդգծում էր. «Խորհրդային Ռուսաստանը հեռու է, զբաղված է իր գործով, և չի կարող ոչ մի իրական օգնություն ցույց տալ։ Իր ժողովրդին անկեղծորեն սիրող յուրաքանչյուր հայ, ինչ համոզմունքների տեր էլ նա լինի, պետք է ըմբռնի, որ այժմ ժամանակը չէ ինչ-որ հեղաշրջումների, ...դուք քայքայում և պառակտում մտցրեցիք բանակում՝ փորձից հրաշալի իմանալով, թե ինչպիսի վերջնական արդյունքի կհանգեցնեն ձեր գործողությունները։ Դիմում եմ ձեզ՝ խորհելու և հայրենիքը չկործանելու կոչով»[17]։ Ցավոք, ապստամբության ղեկավարները չունկնդրեցին նման ողջամիտ խոսքերը։ Առողջ դատողությունը քչերին էր տրված, և տվյալ պահին ազգային-պետական շահերից վեր դասվեց կուսակցական-անձնական պատվախնդրությունը։

Այսպիսով, մի կողմից, չիրականացան դրսից ռազմական օգնություն ակնկալելու հույսերը, մյուս կողմից՝ ապստամբության բախտախնդիր ղեկավարները, հաշվի չնստելով առկա իրավիճակի հետ, այնուամենայնիվ, սկսեցին զինված ելույթները։

Նախօրոք մշակված պլանի համաձայն, նախատեսվում էր զինված ելույթը սկսել միաժամանակ Ալեքսանդրապոլում և Ղազախում՝ հաջողության դեպքում մայրաքաղաքը գրավելու մտադրությամբ։ Ապստամբության կենտրոնական շտաբի դերը ստանձնեց Հայաստանի՝ ինքը հոգանոց Ռադմահեղափոխական կոմիտեն, որի նմանակները ստեղծվեցին նաև տեղերում[18]։ Սակայն հենց սկզբից ակնհայտ դարձավ ապստամբությունը ղեկավարող ուժերի անկազմա-

---

16 Ա. Մռավյան, Հոդվածներ և ճառեր, Ե., 1961, էջ 80։

17 Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении (сборник документов), под ред. А. Н. Мнацаканяна и др. Е., 1957, с. 329.

18 ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ), ֆ. 1022, ց. 3, գ. 257, թ. 2։

կերպվածությունը և անվճռականությունը։ Այսպես, մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում սկսված գործողությունները Ղազախի շրջանում չուղեկցվեցին համապատասխան քայլերով, ինչը արդեն նշանակում էր ապստամբական պլանի ձախողում։

Հատկանշական է, որ մինչև ապստամբության պաշտոնական սկիզբը, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին ուղղված հեռագրում Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի անդամ Ավիս Նուրիջանյանը, լավատեսական նոտաներով բնութագրելով ստեղծված իրավիճակը, միաժամանակ խոստովանում էր «զինվորական զանգվածի անբավարար կազմակերպության և կողոպուտների երկյուղի» մասին[19]։ Երկու օր անց, Արմենկոմին ուղղված իր նամակում անհամաձայնություն հայտնելով ապստամբության նախատեսված պլանի վերաբերյալ, Ա. Նուրիջանյանը գրում էր. «Ձեր որոշումը սկսել Ղազախում, և հետո այստեղ, այն էլ կապ հաստատել, և այնուհետև սկսել հիմքից համարում եմ անճիշտ. նախ պետք է վերցնել և ապա առաջ շարժվել։ Եվ առաջինը պետք է սկսենք Ալեքսանդրապոլում, որտեղից մենք կսկսենք Ղազախի վրա շարժվել»[20]։

Դժվար չէ եզրակացնել, որ հայ բոլշևիկ առաջնորդների միջև ի սկզբանե կային էական տարաձայնություններ՝ ապստամբության սկսման և ընթացքի վերաբերյալ։ Իր դատողություններում առավել կատեգորիկ Ա. Նուրիջանյանն ընդգծելով սկզբունքային անհամաձայնությունը կուսակցական վերադաս մարմնի որոշման հետ, նշում է. «Ղազախի գավառից սկսելու, իսկ Ալեքսանդրապոլում՝ դեռևս սպասելու վերաբերյալ Հայաստանի կոմիտեի որոշումը մեզ կանգնեցնում է փակուղու առջև... Ստիպված կլինենք խորհրդային իշխանության և Հայաստանի կոմկուսի պատմության առջև պատասխան տալ կուսակցական կազմակերպությունների ջախջախման և իշխանության գրավումը մեկ, գուցե և երկու ամիս ձգձգման համար»[21]։

Դժվար է միանշանակ պատասխան տալ այն հարցին, թե Ավիս-Արմենկոմ տարաձայնությունների դաշտում ո՞վ էր ավելի իրավացի։ Իրողությունն այն էր, որ կառավարական զորքերի պասսիվության հետևանքով, առանց որևէ արգելքի, Ալեքսանդրապոլում իշխանությունը գրաված ապստամբները, այդպես էլ վճռականություն չցուցաբերելով, չկարողացան զարգացնել ձեռք բերված հաջողությունը։ Իսկ մինչ այդ Երևանում ստեղծվել էր կառավարական ճգնաժամ։ Բոլշևիկների հետ համաձայնության գալու ապարդյուն փորձերից հետո, 1920 թ. մայիսի 5-ին ասպարեզից հեռացած Ալ. Խատիսյանի կաբինետի փոխարեն ՀՀԴ բյուրոյի անդամներից ստեղծվեց նոր կառավարություն (բյուրո-կառավարություն), որի գլուխ կանգնեց Համազասպ Օհանջանյանը[22]։ Ալ. Խատիսյանի վկայությամբ, ինքը չէր հրավիրվել ստեղծված կազմությունն և նոր կառավարություն կազմելու առնչությամբ ՀՀ Դաշնակցության խորհրդարանական խմբակցության և կուսակցության գերագույն վարիչ մարմնի (բյուրոյի) միացյալ նիստին[23]։ Ընդգծելով վարչապետի նկատմամբ թույլ տված նման անարդարությունը, Ալ. Խատիսյանը, միաժամանակ, ինքնաքննադատության կարգով խոստովանում է, որ ինքն էլ պարտավոր էր հրավիրել նախարարների խորհուրդ և որոշում կայացնել հրաժարականի մասին[24]։

Ինչևիցե, իշխանության դեկը բյուրոյին անցնելն ըստ էության նախադրյալներ ստեղծեց իրավիճակն ստիճանաբար վերահսկելու և ապստամբների նկատմամբ համապատասխան քաղաքականություն իրականացնելու։ Քաղաքական իրավիճակի կայունացման նպատակով բյուրո-կառավարությունը հա-

19 Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 6, թ. 6։
20 Նույն տեղում, գ. 6, թ. 6։
21 Նույն տեղում։
22 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 67։
23 Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 214—215։
24 Նույն տեղում, էջ 216։

կայազետական գործունեության մեջ ընդգրկված անձանց պատժելու համար ստեղծեց արտակարգ դատարաններ[25]։ Կառավարությունը մշակեց արտակարգ միջոցառումների պլան, որի գլխավոր խնդիրին էր իրավիճակը ապակայունացնող գործողությունների կասեցումը։ 1920 թ. մայիսի 6-ի՝ նախարարների խորհրդի նիստում ընդունված որոշմամբ ներքին գործերի նախարարին հանձնարարվում է ձեռք առնել կտրուկ միջոցներ՝ բոլշևիկներին Հայաստանի ամբողջ տարածքում ձերբակալելու համար[26]։ Արտակարգ դատարանների ստեղծումը և մահապատժի սահմանումը դարձան այն հիմնական օղակները, որոնք, աստիճանաբար սեղմվելով, պետք է հանգեցնեին ծրագրված խնդիրների իրականացմանը։ Մայիսի 8-ին նախարարների խորհուրդը, խորհրդարանի կողմից իրեն հանձնված օրենսդրական լիազորությունների հիման վրա հրապարակեց մեկ այլ օրենք «Պետական ծառայողների սաբոտաժի և բանվորների գործադուլի արգելման մասին»[27]։

Կառավարությունը, մտահոգություն հայտնելով զորքում որոշակի տարածում գտած բոլշևիկամետ տրամադրությունների կապակցությամբ, միաժամանակ նախատեսում էր կոնկրետ միջոցառումներ, որոնց շարքում տեղ էին գտել զինվորների կրթական և դաստիարակչական մակարդակի բարելավումը, նրանց ընտանիքներին որոշակի նյութական օգնություն ցուցաբերելը, զինվորների համար նախատեսված թերթի հրատարակումը և այլն[28]։

Գիտակցաբար թե ներքին բնազդով, հաշվի առնելով արտաքին թշնամու առկայության դեպքում ներքին իրավիճակի ապակայունացման ամբողջ վտանգավորությունը, կառավարության վերոհիշյալ միջոցառումները պաշտպանեցին գրեթե բոլոր քաղաքական ուժերը, բնակչության մեծ մասը, ինչպես նաև հայ առաքելական եկեղեցին։ Այդ ճակատագրական օրերին Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի խորհրդի օրգան «Հայաստանի ձայն» թերթի խմբագրականում շեշտվում էր. «Ճիշտ այս պահուն Ալեքսանդրապոլու մեջ արկածախնդիրներու նոր խումբ մը հրապարակ կուգա հանուն բոլշևիզմի և կոմիտեի պետական հեղաշրջումով ընդմիշտ վերջ տալ հայ ժողովրդի անկախության գաղափարին և մեր երկիրը մատնել նորանոր ավերումների։ Մուստաֆա Քեմալը քայլ առ քայլ կմոտենա մեր սահմաններուն, կանաչ Ադրբեջանը կսոե ժանիքները։ Այս ներքին և արտաքին արհավիրքներու մեջ միայն ժողովրդի և հայրենիքի թշնամիները ու դավաճանները պիտի խորհին, փորձել Հայաստանի նորակազմ հանրապետության ներկա հասարակարգը և իշխանությունը տապալել և անոր տեղ դնել «սովետական» իրավակարգ, ուրիշ խոսքով, քաղաքացիական ահավոր կռիվը մը և համայնավար անարխիա մը...»[29]։

Հանրապետությունում գործող քաղաքական կուսակցությունները, անկախ իրենց ծրագրերից ու գործելակերպից, կառավարության շուրջ համախմբվելու ազգանպաստ գործողություններ ձեռնարկեցին։ Նման մոտեցումը ազգայնապետական շահը կուսակցականից վեր դասելու անսքող դրսևորում էր։ Պետական վտանգին վերաբերող՝ մայիսի 13-ին հանրապետության վարչապետի մոտ կայացած խորհրդակցությունում քաղաքական տարբեր կուսակցություններ խոր մտահոգություն արտահայտեցին «արտաքին ու ներքին փոթորիկների հանդեպ», միաձայն որոշեցին «կանգնել պետական ինքնապաշտպանության և միացյալ Հայաստանի անկախության տեսակետի վրա»[30]։

Հայրենիքի համար այդ ճակատագրական ժամանակաշրջանում գործող միջկուսակցական մարմինը հանրապետության քաղաքացիներին ուղղված կոչում ընդգծում էր, որ «Ալեքսանդրապոլի, Ղարսի, Սարիղամիշի, Նոր-Բայազետի

25 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 80։
26 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 125ա, թ. 2։
27 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 128։
28 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 125ա, թ. 1։
29 Հայաստանի ձայն, 15.V. 1920։
30 Նույն տեղում, Ժողովուրդ, 16.V. 1920։

խռովություններին հետևեց Դիլիջանի դավադրը»։ Գնահատական տալով այդ իրադարձություններին, փաստաթղթում ասվում էր. «Ներքին ոճրագործ տարրերի պետական դավաճանությանը հաջորդեց արտաքին նույնօրինակ տարրերի անհանդուրժելի արշավանքը դեպի մեր երկրի խորքերը։ Թող հայ քաջարի բանակը սուրբ ուխտի երդումը տա կազմ ու պատրաստ դիմագրավելու համար Հայաստանի անկախությունը բոլոր թշնամիների դեմ, ով որ կողմից և ինչ անվան տակ կուզեն, թող լինեն նրանք»[31]։

Քաղաքական և հոգեբանական նման իրավիճակում հասկանալի է, որ ապստամբները չէին վայելում ժողովրդի մեծամասնության աջակցությունը։ Ուստի տրամաբանական էր, որ նրանց գործողությունները կաշկանդվածության, անվճռականության և անկազմակերպվածության հետևանքով դատապարտված էին ձախողման։ Ապստամբությունը սկսելուց մի քանի օր անց՝ մայիսի 14-ին. Ալեքսանդրապոլ մտած, գլխավորապես արևմտահայ աշխարհազորայիններից բաղկացած, Սեպուհի գլխավորած ուժերը առանց լուրջ դիմադրության կարողացան ընկճել ապստամբներին։

Գրեթե այդ նույն օրերին, մարվեցին ապստամբական բռնկումները Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Իշևան-Ղազախում, Ղարաքիլիսայում, ինչպես նաև Զանգեզուրում։ Ավելորդ չէ նշել, որ չնայած ապստամբական ելույթների անկազմակերպվածությանը, այդուհանդերձ, հանրապետության տարբեր մասերում դրանց ի հայտ գալը վկայում էր Խորհրդային Ռուսաստանի և արդեն խորհրդայնացված Ադրբեջանի ազդեցությանը տուրք տալու մասին։ Վերոհիշյալ միտումը սնվում էր, անշուշտ, Ադրբեջանից հետո Հայաստանում նույնպես խորհրդային կարգեր հաստատելու գայթակղությունից։ Այդ օրերին կառավարությանն ուղղված զեկուցագրերից մեկում ռազմական նախարարի օգնական գեներալ-լեյտենանտ Հ. Հախվերդյանը գրում էր. «Հայաստանի զանազան մասերում ունեցած մեծամասնական բռնկումները լիկվիդացիայի են ենթարկված։ ...Այն հանգամանքը, որ բռնկումները եղել են Հայաստանի զանազան մասերում և որ պառակտումները համարյա թե միաժամանակ են տեղի ունեցել և այն, որ մի քանի օր դրանից առաջ տեղի է ունեցել հեղաշրջում Ադրբեջանում, և նկատելի են եղել այսպես ասած մեծամասնական բռնկումներ Վրաստանում, հիմք է տալիս կարծելու, որ այդ բռնկումները ծնունդ չեն միմիայն առանձին անհատների նոր կամքի»[32]։

Իսկապես, ապստամբները դգալի նյութական և բարոյական օգնություն էին ստանում հարևան Ադրբեջանից, որի խորհրդային կոչվող ղեկավարությունը փորձում էր ակտիվորեն միջամտել Հայաստանի ներքին գործերին։ Բաքվում լույս տեսնող «Коммунист» թերթը, 1920 թ. մայիսի 18-ի առաջին իսկ համարում նկարագրելով հայ գյուղացու թշվառ վիճակը և «խմբապետական վարչակարգից տառապող գյուղերը», հանգում էր այն հետևության, որ միայն ու միայն կոմունիստական հեղափոխությունը վերջ կդնի այդ անտանելի վիճակին և ժողովրդին կազատագրի իմպերիալիստների լծից[33]։ Սակայն «կարմիր» Բաքվի միջամտությունը չէր սահմանափակվում սոսկ «եղբայրական» հայ ժողովրդի տառապանքները արձանագրելով և ցավակցելով։ Հայաստանի կառավարությանն ուղղված նոտայում Ադրբեջանի կոմկուսի ղեկավարությունը, նախազգուշացնելով Ն. Աղբալյանի և Խորենու գլխավորած «հակահեղափոխական տրիբունալի», ինչպես նաև «մաուզերիստների գլխավոր դահիճ» Սեպուհի և դենիկինյան սպաների գործողությունների վերաբերյալ, առաջարկում էր անհապաղ դադարեցնել իրենց ընկերների ձերբակալություններն ու գնդակահարությունները՝ պատասխանի համար տալով ընդամենը 2 օր[34]։

---

31 Հայաստանի ձայն, 28.V. 1920։

32 ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1083, թ. 1։

33 Великая Октябрьская.., с. 346.

34 Նույն տեղում, էջ 368։

Հարկ է ընդգծել, որ Մայիսյան ապստամբության ժամանակ հիմնական ընդվզող տարրը զինվորականությունն էր։ Մինչ այդ էլ հանրապետության զինված ուժերում, մասնավորապես նրա շարքային անձնակազմի վրա որոշակի ազդեցություն էր թողել բոլշևիկների քարոզարշավը։ Տակավին ապրիլի 30-ին զորավար Նազարբեկյանի գաղտնի հրամանից ելնելով՝ Երևան քաղաքի զինվորական պարետ Շահիաթունին բոլոր օղակների հրամանատարներին պարտավորեցնում էր եռանդուն միջոցներ ձեռնարկել բոլշևիկյան քարոզչության առաջն առնելու համար։ Նման անհանգստությունը պայմանավորված էր Կովկասի սահմաններին խորհրդային զորքերի մոտեցմամբ[86]։ Այստեղ անհրաժեշտ է նշել, որ սկզբնական պահին փոքր-ինչ շփոթված իշխանությունների ուշքի գալը և կտրուկ գործողությունների դիմելը մեծ ազդեցություն թողեցին իրադարձությունների հետագա ընթացքի վրա։ Մայիսի 12-ին երկաթգիծը ռազմական դրության մեջ հայտարարելը, ինչպես նաև արտակարգ դատարան և. մահապատիժ մտցնելը արմատապես փոխեցին ստեղծված իրավիճակը։ Ապստամբների բարոյական ընկճվածությունը առավել նկատելի դարձավ մայիսի 13-ին՝ կառավարական զորքերի կողմից Անիի և Աղինի կայարանների գրավումից և Մուսայելյանի ղեկավարած զրահագնացքի նահանջից հետո։ Այդ նույն օրը Կարսում տեղաբաշխված և ընդամենը մի քանի ժամ առաջ խորհրդային իշխանությունը ճանաչած զորքերը երես դարձրին նրանից և անցան կառավարության կողմը։ Տեղի ռազմահեղափոխական կոմիտեն փախուստի դիմեց՝ փորձելով անցնել Ալեքսանդրապոլ։ Սակայն ճանապարհին՝ Արգինա գյուղի մոտ նրանք ընդհարվեցին միլիցիոներների հետ, որի հետևանքով 9 ապստամբներ սպանվեցին, այդ թվում՝ Ղ. Ղուկասյանը։

Դատելով առկա փաստաթղթերից՝ բոլշևիկների ազդեցությունը համեմատաբար թույլ էր Ալեքսանդրապոլի կայազորում։ Վերադասին ուղղված՝ գնդապետ Մելիք-Շահնազարովի զեկուցագրում այն միտքն էր հայտնվում, որ զինվորների շրջանում բոլշևիկյան քարոզչության արդյունքները նվազագույնն են, իսկ ինչ վերաբերում է սպայական կազմին, ապա վերջինս, հանդես գալով լոյալ դիրքերից, որոշակի ատելություն էր ցուցաբերում մաուզերիզմի ու խմբապետության նկատմամբ[86]։

Այդ նույն օրերին հուզումներն ընդգրկեցին նաև Դիլիջանի և Նոր Բայազետի շրջանները։ Մայիսի 17-ին Վ. Լենինին ուղղված հեռագրում Դիլիջանի հեղկոմը հայտնում էր, որ «դաշնակների իշխանությունը անխուսափելիորեն աշխատավոր հայ ժողովրդին կներքաշի նոր արյունոտ սպանդի մեջ՝ թուրք ժողովրդի հետ»[87]։ Հեռագրում նշվում է, որ բուրժուական լծի դեմ պայքարող Հայաստանի բանվորներն ու գյուղացիները օգնություն են սպասում Խորհրդային Ռուսաստանից։ Իր հերթին, դաշնակցական ղեկավարությունը Վրաստանում ՀՀ ներկայացուցչի միջոցով օգնություն էր հայցում Արևմուտքի դաշնակիցներից[88]։

Ստեղծված իրավիճակը բարդանում էր նրանով, որ հայ բնակչության ընդալի մասի պատկերացմամբ, բոլշևիկյան զորքերը խորհրդանշում էին Ռուսաստանը և ռուս ժողովրդին։ Հենց այդ անհանգստությունն էր ընդգծվում հանրապետության պառլամենտի անդամի և դաշնակցական կառավարության քարտուղարի միջև ուղիղ գծով կայացած մի խոսակցությունում, որում, նշելով Դիլիջանի գավառում ստեղծված անմխիթար վիճակի մասին, այն կարծիքն էր հայտնվում, որ «Ռուսաստանը Կովկաս է վերադառնում բոլշևիկների անվան տակ և որ հայերը չպետք է նրա հետ պատերազմեն, և ինչպես լինում է սովորաբար, չեն սպասում ռուսների գալուն, այլ իրենք են նրանց հրավիրում»[89]։

86 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 148, թ. 1։

88 Նույն տեղում, ֆ. 4033, ց. 3, գ. 41, թ. 2։

87 Великая Октябрьская.., с. 341.

88 Նույն տեղում, էջ 347։

89 Բանբեր Հայաստանի արխիվների, 1980, № 1, էջ 197։

Վիճակը բարվոք չէր նաև Նոր Բայազետի գավառում, որտեղ մայիսի 13-ին արդեն սկսվել էին ապստամբական գործողությունները։ Հարկ է ընդգծել, որ տակավին հանրապետության ստեղծման առաջին իսկ օրերին այս տարածաշրջանն առանձնանում էր իր խիստ անկայուն կացությամբ։ Արդեն այդ ժամանակահատվածում հանրապետության ներքին գործերի նախարարությունը անհրաժեշտ էր համարում պատժիչ գործողություններ իրականացնել նշված գավառի մի շարք բնակավայրերում, որոնք հրաժարվում էին ճանաչել Ադզային խորհրդի իշխանությունը և ղեկված դիմադրում էին նրան։ Նույն օրերին հանրապետության ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը հայտնում էր, որ, ըստ Նոր Բայազետում գտնվող զինվորական կորպուսի շտաբի պետի հաղորդագրության, գավառի բնակիչները «թաքցնում են դասալիքների մի ամբողջ զանգված, չեն տրամադրում սննդամթերք զորքերին, սպանել են 2 զինվոր, զինաթափել են մյուսներին և այլն»[40]։

Ինքնին հասկանալի է, որ նման երևույթները առավել խորացան 1920 թ. ընթացքում, երբ ընդհանուր իրավիճակը հանրապետությունում անհամեմատ ապակայունացել էր։ Այդ բախտորոշ ժամանակաշրջանում Նոր Բայազետի գավառային կոմիսարը հակակառավարական տրամադրությունների աճի և իշխանություններին չենթարկվելու երևույթներին վերաբերող իր զեկուցագրում նշում էր, որ զինծառայողները «բացահայտորեն լքում են իրենց պոստերը։ Դասալքությունը ահռելի չափեր է ընդունել։ Ցարամիտ տարրերը պղտորում են ժողովրդին։ Անպատիժ կերպով ագիտացիա են տանում իշխանությունների դեմ։ Անարխիան օրեցօր աճում է»[41]։

Նման իրավիճակում հանրապետության ներքին գործերի նախարարին ուղղված՝ 1920 թ. մայիսի 17-ի գաղտնի հաղորդագրության մեջ գեներալ Նազարբեկյանը տեղյակ էր պահում, որ Երևանի պարեկային գումարտակի վաշտերը արագ տեղափոխվել են Նոր-Բայազետ՝ խռովությունը ճնշելու համար[42]։ Միաժամանակ, միջոցներ էին ձեռնարկվում Ալեքսանդրապոլի գավառից, անհապաղ մի քանի հարյուրակ հեծյալ միլիցիոներների Նոր-Բայազետ ուղարկելու համար[43]։

Այսպիսով, 1920 թ. մայիս ամսին Հայաստանի Հանրապետության տարբեր մասերում տեղ գտած հուզումները, համապատասխան սոցիալական հենարան չունենալու և իշխանությունների ձեռնարկած գործողությունների հետևանքով, ավարտվեցին անհաջողությամբ։

Ապստամբության ղեկավարները, մի կողմից, ոգևորված լինելով Ադրբեջանի խորհրդայնացումով և Հայաստանի անմիջական սահմանների մոտ Կարմիր բանակի զորամասերի հայտնվելով, իսկ մյուս կողմից՝ տուրք տալով հեղափոխական ռոմանտիզմին, որոշեցին առաջ ընկնել դեպքերի զարգացման տրամաբանական ընթացքից և նույնիսկ առանց Մոսկվայի բոլշևիկյան դեկավարության հրահանգը ստանալու դիմեցին չհիմնավորված և իրական կացությունից չբխող գործողությունների։

Միաժամանակ անժխտելի է, որ ապստամբության ընթացքը որոշակի հետք թողեց ժամանակի ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրադրության վրա։ Եթե մինչև մայիսյան դեպքերը բանակում տեղ գտած առանձին խմորումները առաջին հերթին ունեին տնտեսական հիմք՝ կապված սպայական կազմի որոշ ներկայացուցիչների թույլ տված հափշտակումների ու թալանի հետ, ապա հետմայիսյան ժամանակաշրջանը բնութագրվում է աստիճանաբար սրվող քաղաքական ճգնաժամով։ Ընդսմին, տվյալ երևույթը առանց բացառության տարածվում էր իշխանության բոլոր կառույցների վրա։ Մայիսյան դեպքերի հետևանքով ստեղծված ապակայունացումը բացասաբար

40 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 8։

41 Բանբեր Հայաստանի արխիվների, 1967, № 2, էջ 13։

42 Նույն տեղում, էջ 13։

43 Նույն տեղում, 1980, № 11, էջ 106։

անդրադարձավ նաև հարևան պետությունների՝ Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա։ Ինչպես նշում է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեգզադյանը արտաքին գործերի նախարարին ուղղված իր հեռագրում, «Երևանում և մանավանդ Ալեքսանդրապոլում տեղի ունեցած բոլշևիկյան ցույցերը վրաց կառավարության վրա այն տպավորությունն են թողնում, որ մեր կառավարությունը չափազանց թույլ է և տատանվող և չի կարողանում ուժեղ դիրք բռնել ներքին հանգստությունը ապահովելու համար, և այդ պատճառով նրանք կարծես թե չեն վստահում մեզ հետ ավելի մոտ հարաբերություններ պահպանել»[44]։

Մայիսյան իրադարձությունների ազդեցության ոլորտից դուրս չմնաց նաև երկրի տնտեսությունը, հատկապես գյուղատնտեսությունը։ Ապստամբության հետևանքով մասնակիորեն ձախողվեցին գարնանացանի աշխատանքները։ Մասնավորապես Շիրակի և Կարսի շրջանների մի շարք գյուղեր չկարողացան ժամանակին ցանք կատարել, իսկ մի քանի այլ գավառներում սերմացու ցորենը խռովարարների կողմից բռնագրավվեց[45]։

Հանրապետության տարբեր մասերում բռնկված հուզումները հանդարտեցնելու համար կառավարությունից պահանջվեցին զգալի միջոցներ, և կառավարությունը կատարեց մեծ չափերի հասնող չնախատեսված ծախսեր։ Կարևոր է նաև այն փաստը, որ ինչպես նշվում էր ՀՀ Դաշնակցության Երևանի ներկայացուցչական խորհրդի հուլիսի 15-ի նիստում, նախարարապետ Հ. Օհանջանյանի՝ արդի կացությանը վերաբերող զեկուցման մեջ, միջազգային պարենավորման հանձնաժողովի կողմից հանրապետությանը հատկացված 42.000 տոննա ալյուրը, որը կարող էր էապես նպաստել Հայաստանի պարենային խնդիրների լուծմանը, այդպես էլ տեղ չհասավ՝ մայիսյան իրադարձությունների հետևանքով[46]։ Ավելորդ չէ նշել, որ Հայաստանից Իտալիա ուղարկվող բամբակի զգալի քանակություն (25.000 փութ) հանիրավի բռնագրավվեց Կովկասի ֆրանսիական կոմիսար դը Մարտելի կողմից՝ նույն պատճառով։ Մինչդեռ նավահանգստի բանվորները հրաժարվել էին բեռնել հայ ժողովրդի սեփականությունը համարվող՝ ուրիշի զավթած ապրանքը[47]։

Ինչևիցե, ապստամբությունը պարտվեց, և եկավ «հատուցման» պահը։ Իշխանությունները դիմեցին կոնկրետ միջոցների, որոնց նպատակը ոչ միայն ապստամբության կազմակերպիչներին պատժելն էր, այլև համապատասխան տրամադրությունները, առանձնապես բանակում, արմատախիլ անելը։ Ապրստամբության մի քանի ղեկավարներ սպանվեցին, իսկ մի քանիսն էլ արտակարգ դատարանի վճիռներով մահապատժի ենթարկվեցին։ Դրանց թվում էին Ս. Տ. Ալավերդյանը, Բ. Ղարիբջանյանը, Ս. Մուսայելյանը, Ե. Սևյանը, Ա. Մելքոնյանը, Ղ. Ղուկասյանը, Հ. Սարուխանյանը, Բ. Բատիկյանը և ուրիշներ։ Ընդհանուր առմամբ, բանտարկվեց մոտ 250 մարդ[48]։

Մարդկային կորուստները երբեք չեն արդարացվում, սակայն անարդարացի են նաև ղրանց ուռճացման փորձերը։ Հայաստանի կառավարությանն ուղղված Ագրբեջանի կոմկուսի ղեկավարության նոտայում (1920թ. հունիսի 20) հայտարարվում էր այն մասին, որ իրենց ունեցած տվյալների համաձայն, Կարսի շրջանում գնդակահարվել է 300 մարդ[49]։ Նույն փաստաթղթում ընդգծվում էր Ագրբեջանի կոմկուսի կենտկոմի վրդովմունքը Հայաստանում իրենց ընկերների նկատմամբ դահիճների դրսևորած դաժանության կապակցությամբ։ Տեղին է հարցնել, թե որտեղ էին հայ ժողովրդի այդ «բարեկամները», երբ սույն դեպքերից ընդամենը երկու-երեք ամիս առաջ դահճապետ Խոսրով Բեկ

44 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 2, գ. 72, թ. 7։
45 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 152—153։
46 Հառաջ, 23.VI. 1920։
47 Նույն տեղում։
48 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 185—186։
49 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, մաս 1, թ. 368։

Սուլթանովի գլխավորությամբ կոտորվեց Շուշիի երեք տասնյակ հազարի հասնող բնակչությունը։ Ավելորդ է մեկնաբանել, որ մայիսյան իրադարձությունների հետ կապված բոլշևիկյան քարոզչական աղմուկը բացահայտ քաղաքական բնույթ էր կրում և թելադրված էր սոսկ դասակարգային և ոչ թե ազգային նկատառումներով։

Վերոգրյալը ընդհանրացնելով՝ պետք է ասել, որ Մայիսյան ապստամբությունը ի սկզբանե դատապարտված էր անհաջողության։ Բանն այն է, որ Խորհրդային Ռուսաստանը և անձամբ Վ. Ի. Լենինը այս շրջանում դեռևս չէին ծրագրել Հայաստանի խորհրդայնացումը, ուստի և հրահանգ չկար Ադրբեջանից Կարմիր բանակի՝ Հայաստանի աշխատավորներին «օգնության» հասնելու մասին։ Իսկ մյուս կողմից էլ բուն Հայաստանում ապստամբությունը լավ չէր նախապատրաստվել տեղի բոլշևիկների կողմից։ «Բոլոր վավերագրերն ու փաստական տվյալները,— խոստովանում է նշանավոր բոլշևիկ Ա. Կարինյանը,—վճռական կերպով հաստատում են, որ ապստամբությունն իրականում անկազմակերպ հեղափոխական տարերքի բռնկում էր»[50]։ Հիրավի, մի ելույթ, որը ինչպես հարկն է չի նախապատրաստված ու կազմակերպված և աղերսվում է մարդկանց կյանքի, մի ամբողջ երկրի ու ժողովրդի հետագա ճակատագրի հետ, ապա այդպիսին պետք է որակել առնվազն բախտախնդրություն։

Այսպիսով, 1920 թ. գարնանը Հայաստանի ներքաղաքական իրադրությունը պայմանավորված էր ուղղակի և անուղղակի իրար լրացնող երկու բացասական հանգամանքներով՝ ա) դրսից հրահրվող թուրք-թաթարական խռովությունների սաստկացմամբ և բ) դարձյալ դրսի ազդեցությամբ Հայաստանում բռնկված Մայիսյան ապստամբությամբ։ Թեև երկու ելույթներն էլ ՀՀ իշխանությունների ջանքերով հնազանդեցվեցին, սակայն հանրապետության քաղաքական դրությունը այդպես էլ չկայունացավ։ Մայիսյան ապստամբությունը փաստորեն ՀՀ անկման նախերգանքը դարձավ։

ВНУТРИПОЛИТИЧЕСКАЯ ОБСТАНОВКА В АРМЕНИИ ВЕСНОЙ 1920 г.

Л. С. САРКИСЯН

Резюме

Наисложнейшая внутриполитическая обстановка в первой республике Армении весной 1920 г. была обусловлена прямыми и косвенными отрицательными факторами, дополняющими друг друга, а именно: а) усилением турецко-татарских мятежей б) вспыхнувшим в Армении Майским восстанием. Несмотря на то, что эти выступления вследствие предпринятых правительством Республики Армения мер были подавлены, к сожалению, политическая обстановка в республике, под влиянием внешних сил, так и не нормализовалась.

Фактически, Майское восстание стало предвестником крушения Республики Армения.

50 Ա. Բ. Կարինյան, Դաշնակցությունը և իր զինակիցները, Ե., 1932, էջ 82։